"In so many corners of the campus, our faculty and students are focused on identifying and addressing the conditions that create social unrest, displacement and injustice," said UCLA Chancellor Gene Block. "The Promise Institute will become UCLA's center for collaboration in this area and will greatly enhance our ability to serve a global leadership role."

The institute will advance the law school's already-extensive work in the field of human rights. Law school faculty and students will collaborate with scholars in other disciplines from across the UCLA campus, and the institute will train the next generation of human rights leaders and develop strategies to address crises around the globe.

Dr. Eric Esrailian, the lead producer of "The Promise" and a faculty member at the David Geffen School of Medicine at UCLA, spearheaded the effort to establish the institute.

"The Armenian genocide must never be forgotten, and this need was one reason why we made 'The Promise,'" Esrailian said. "However, human rights tragedies — in Syria, the Congo and South Sudan and a global refugee crisis — continue to unfold today."

"The Promise Institute is so named because UCLA and the UCLA School of Law are making a commitment to keep the promise to the victims of human rights abuses — that we will create the tools and train people of integrity and talent to address these crises. Out of the darkness of the

Armenian genocide and our film, we will bring light into the world to help people who need it today."

The institute will expand UCLA Law's course offerings in human rights studies, enhance hands-on programs in human rights law and policy, publish research and policy assessments, bring experienced human rights scholars and practitioners to UCLA Law as faculty members and guest speakers, support students through fellowships and scholarships, and host symposia and related events.

UCLA Law students and faculty currently work with the Office of the Prosecutor of the International Criminal Court and the United Nations Special Rapporteurs on the Right to Food and on Contemporary Forms of Racism, Racial Discrimination, Xenophobia and Related Intolerance; and with human rights organizations in countries including Bangladesh, Honduras, India and South Africa.

"This visionary gift is a giant step toward making UCLA Law the premier center for human rights in Southern California," said UCLA Law Dean Jennifer Mnookin. "While the school already has a strong record of human rights scholarship and activity, the Promise Institute will greatly enhance our program and have an impact felt around the world. Dr. Esrailian and the makers of 'The Promise' have shown extraordinary leadership, and we are thrilled that their commitment permits us to launch an institute that promises to grow into a major academic crossroads for human rights."

Esrailian and Anthony Mandekic, president and CEO of Tracinda Corporation, are also the co-managers of Survival Pictures, which was founded by the late Los Angeles businessman and legendary philanthropist Kirk Kerkorian. Survival Pictures was established to tell this story of perseverance and human endurance, and it has begun a campaign to teach the public about the genocides and mass atrocities of the 20th and 21st centuries.

## Thousands March for Justice

Continued from page 1

Masters of Ceremony Hrach Avedissian and Lara Armani skillfully guided the rally, which included remarks from the Armenian Genocide Committee by Silva Katchiguan, Raffi

Hamparian and Armig Khodanian. The youth's message was delivered by Rafi Orphali. The rally also featured musical performances by R-Mean, Joseph Krikorian, Armenchik, Maria Cozette, and Harout Pamboukjian.


## Dr. Richard Hovannisian to Present His New Book at Immanuel Armenian Congregational Church

DOWNEY -- Dr. Richard Hovannisian, Professor Emeritus of Armenian and Near Eastern History at UCLA, will present a talk on his newly published book "Armenian Communities of the Northeastern Mediterranean: Musa Dagh-Dört Yol-Kessab" at 1:30PM on Sunday, April 30, 2017, at the Immanuel Armenian Congregational Church, 9516 Downey Avenue, Downey, CA 90240.

"Armenian Communities of the Northeastern Mediterranean" focuses on the history, economic, cultural, educational and political developments among the Armenians in Musa Dagh, Dört Yol, and Kessab. It also presents the thriving Armenian communities of Beylan and Antioch and the onetime Armenian villages in the Ruj Valley and those near Latakia.

Prof. Hovannisian will explore dramatic episodes in Armenian history and the heroism of the rugged and sturdy people who lived and defended these communities and, in the case of Kessab and a single village in Musa Dagh, continue to endure there. The presentation will also examine the fraudulent transfer of the Sanjak of Alexandretta to Turkey in 1939 and the three-month occupation of the area by the al-Nusra front in 2014.

Dr. Richard G. Hovannisian is Professor Emeritus of Armenian and Near Eastern History at UCLA, President's Fellow at Chapman University, and Adjunct Professor of History at USC to work with the Shoah Foundation on testimonies of survivors of the Armenian Genocide. He received a Ph.D. in history from UCLA and was a member of the UCLA faculty since 1962, where he organized both the undergraduate and graduate programs in Armenian history and served as the Associate Director of UCLA's Center for Near Eastern Stud-



ies for two decades. Professor Hovannisian is a founder and six-time president of the Society for Armenian Studies (SAS), and a member of a number of editorial boards, scholarly organizations, and civic organizations.

Dr. Hovannisian has given more than 2,500 university and community lectures in 48 countries and has participated in numerous teacher workshops and international forums and media events. He has published more than 30 volumes on Armenia History and culture and seven other books on Near Eastern history, society, and culture. In addition, he has edited and contributed to fourteen volumes in the UCLA conference series, "Historic Armenian Cities and Provinces."

Copies of "Armenian Communities of the Northeastern Mediterranean," as well as other publications in the "Historic Armenian Cities and Provinces Series," will be available the afternoon of the lecture.

The lecture is free and open to the public. Refreshments and fellowship will precede the lecture at 12:00 pm in the social hall of the church. For more information about the lecture please contact Immanuel church at (562) 862-7012.

## 2017 Aurora Prize Finalists Announced

Continued from page 3

of patients, many of them children, affected by persisting violence, thus bringing international attention to the besieged area

Dr. Denis Mukwege, Gynecological Surgeon and Founder of the Panzi Hospital, The Democratic Republic of the Congo

— An obstetrician turned gynecological surgeon who is providing physical, psychological and legal support to more than 50,000 survivors of sexual violence in the war-torn country while fearlessly seeking to bring to justice those responsible

The finalists will be honored at the Aurora Prize Ceremony in Yerevan, Armenia on May 28, 2017 when one will be chosen as the 2017 Aurora Prize Laureate. The Aurora Prize Laureate will receive a grant of US\$100,000 to support the continuation of their work, as well as a US\$1,000,000 award, which will give them the unique ability to continue the cycle of giving by supporting organizations that have in-

spired their work.

The Selection Committee, co-chaired by Academy Award-winning actor and humanitarian George Clooney, includes Nobel Laureates Oscar Arias, Shirin Ebadi and Leymah Gbowee; former president of Ireland Mary Robinson; human rights activist Hina Jilani; former Foreign Minister of Australia and President Emeritus of the International Crisis Group Gareth Evans; and former president of Mexico Ernesto Zedillo. The Committee shortlisted the five finalists from more than 550 nominations for 254 unique candidates submitted by the general public from 66 countries and in 13 languages.

The Aurora Prize for Awakening Humanity was established in 2015 by the Aurora Humanitarian Initiative on behalf of the survivors of the Armenian Genocide and in gratitude to their saviors. The Aurora Prize will honor an Aurora Laureate each year until 2023, in remembrance of the eight years of the Armenian Genocide (1915-1923).

ԷՐՏՈՂԱՆ ԿՐՆԱՅ «ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆ»Ի ՎԵՐԱԾՈՒԻԼ Թուրքիոյ մեծ քաղաքները մերժեցին Էրտողանի «Կոչ»ը

ՍԱԳՕ ԱՐԵԱՆԸ

Սահմանադրական բարեփոխումներ կայացնելով Էրտողան եւ իր վարչախումբը վերջին գամը կը գարնէին «Ժողովրդավարական Թուրքիա» հասկացութեան վրայ: Խորքին մէջ Էրտողան իր այս քայլերով նպատակ դրած էր ստեղծել նոր Թուրքիա մը, իսլամական եւ նէօ-օսմանեան դիմագիծով: Անշուշտ այս հանրաքուէին հիմնական «Թիրախ»ը Մուսթաֆա Քէմալ Աթաթուրքն ու անոր ստեղծած Թուրքիան էր, որ 1920-էն ի վեր չէր կարողացած իր մեծ աւագանին մէջ ձուլել երկրի տարբեր եւ իրար հետ անհաշտ եւ թաքուն լարուածութիւնն ապրող տարբեր համայնքները:

Թուրքիոյ մէջ խնդիր չարուցողը դաւանական տարբերութիւնները չէին միայն, այլ կար էթնիք տարբերութիւններու մեծ ծիր մը, որ տարբեր պարագաներու տակ կը դառնար երկրի կայունութիւնը խանգարող հանգամանք:

Ինչպէս 2015-ի ընտրութիւնները (յատկապէս ընտրութիւններու առաջին փուլը), այս հանրաքուէն ալ կարելի է համարել վիճարկելի եւ վիճեալ ծնունդ: Ընտրողներու 51.4 առ հարիւրով «ամրագրուած» «Այո»ն հեռու էր Թուրքիոյ նախագահին պահանջէն: Ու բնական է նաեւ, որ այս պայմաններու տակ նոյն Էրտողանի առաջին քայլը պիտի ըլլար, արդէն երրորդ անգամ ըլլալով, երկարաձգել երկրին մէջ գործող «արտակարգ դրութեան» կարգավիճակը:

Այդ մօտեցումն ինքնին կը մատնէր, որ Անգարայի գլխաւոր տէրը լուրջ կասկածներ ունի գետնի վրայ ընթացող գործընթացներուն վերաբերել եւ իր քայլով կը հաստատէր, թէ իր համար բաւական մտահոգիչ էր բարեփոխումներուն ինպաստ քուէարկած «Այո»ին ու ոչ միայն բարեփոխումներուն, այլ Էրտողանին «Ո՛չ» ըսած մասաններուն միջեւ առկայ նօսր տարբերութիւնը Հայրենի քաղաքագէտ Լեւոն Շիրինեան հանրաքուէի ընդհանուր պատկերին մասին խօսելով կարեւոր նկատողութիւն մը կատարած էր: Շիրինեան տարբեր մասերու բաժնած էր Թուրքիոյ հասարակութիւնը եւ հիմնաւորելով այդ հատուածներուն իւրաքանչիւրին հանրաքուէին «Այո» կամ «Ո՛չ» քուէարկած ըլլալու փաստը կ'ըսէր «Թուրքիոյ ներքին միասնականութիւնը թոյլ է, հասարակութիւնը ներքին պառակտում կայ, բան մը, որուն մասին կը վկայէ հանրաքուէի նախնական արդիւնքները: Գրեթէ 50 տոկոսի ծիրին մէջ եղած է յաղթանակը: Փոփոխութիւններու օգտին քուէարկածներէն շատ քիչ պակաս է դէմ քուէարկողներու թիւը, որ հակասութիւն կը ստեղծէ: Բիւթէ թէ շատ զարգացած քաղաքներու մէջ մարդիկ ժողովրդավարութիւն կ'ուզեն, իսկ գաւառին մէջ առաւելապէս անտարբեր են: Եւրոպական մասն է, որ կը վախնայ բռնապետութենէ, բան մը, որ Թուրքիոյ մէջ հաւանական է: Վախնալու շատ բան ունին քրիստոնէրը, ներքին լարուածութիւնները կը բերեն թրքական ցեղասպանութեան փորձի: Պէտք է հաշուի առնել այն հանգամանքը, որ Թուրքիա կը կոչուի մշակութապէս, քաղաքակրթօրէն ճաքած եր-



կիր, այստեղ հակասութիւնները շատ տարբեր են մշակույթներու նեցող ժողովուրդներու միջեւ, իսկ այդ ներքին անկայունութիւն կը ծնի: Երկիրը պիտի ձգտի կայունութեան, բայց կեղրոնախոյս եւ կեղրոնաձիգ ուժերու պայքար պիտի ծնի: Մէկ բան յստակ է՝ քաղաքն ու գիւղը կը հակադրուին՝ քաղաքը ժողովրդավարութեան կողմնակիցն է, իսկ գիւղը հետեւեցաւ Էրտողանին: Եթէ Էրտողան յաջողի կեղրոնացնել իշխանութիւնը, դժուարութիւնները յաղթանարէ, բան մը, որ ան կը յաջողի իրագործել թէկուզ սուր ու թուրով, ուրեմն մեր կողքը կ'ունենանք խիստ կանխատեսելի, կայսերական յաւակնութիւններով, Հայաստանի համար վտանգաւոր պետութիւն մը»: Շիրինեան այս կարեւոր փաստարկները լոյսին բերելէ բացի կը յանգի այն եզրակացութեան, ըստ որուն «Թուրքիոյ մէջ կը հաստատուի միապետական ռեժիմ»:

**«Սուլթանի» արտաքին քաղաքականութիւնը**  
Վերջին ամիսներուն Եւրոպայի առաջատար երկիրներուն դէմ իր ուղղած մեղադրանքներէն ետք, Էրտողանի Թուրքիան մտած է այնպիսի փուլ մը, որ դարձած է այդ երկրի մեկուսացման տանող երեւելի «Ֆաթիթօր»:

Այսպէս էրտողան, որ անինսայ կերպով կը քննադատէ Պերլինի, Հոլանտայի, Զուլիցերիոյ եւ այլ երկիրներու ղեկավարները իր գրաւը դրած է իսլամական աշխարհին բացուելու քաղաքականութեան վրայ:

Այս առումով եթէ արագ հայեացք մը նետենք Թուրքիոյ մէջ 2005 թուականէն սկսեալ աճ գրանցող «ԱԶԿ» կուսակցութեան գաղափարական միջուկին վրայ (կուսակցութիւնը այսօր կը հաշուէ 10 միլիոն անդամ), յստակօրէն պիտի տեսնենք, որ իսլամութեան պատուհանով նոր Թուրքիա մը կերտել փորձող այդ կուսակցութեան համար էական եւ գերագոյն նպատակ մը չէր Թուրքիոյ Եւրոպական Միութեան մաս կազմելու հարցը, որ այսօր արդէն դադրած է էական հարց մը ըլլալէ: Եւրոպայի դէմ Էրտողանի հնչեցուցած ծանր մեղադրանքները կերպով մը կը սատարէին, որ յատկապէս Պերլինի, Պէլճիքայի, Հոլանտայի եւ Լիւքսեպուրիի թուրքերը «Այո» ըսեն Էրտողանի «կոչ»ին: Այս մօտեցումով էր նաեւ, որ Թուրքիոյ ղեկավարութիւնը «երկու քարով մէկ թռչուն» «կը գարնէր»: Նախ Եւրոպային «կը հասկցնէր» որ անոր տարբեր քաղաքներուն մէջ երկար

տարիներէ ի վեր «կեանք հաստատած» թուրքերը կը լսեն Անգարայի ձայնը եւ կ'ենթարկուին անոր «տիրոջ» հրամանին: Կար նաեւ յատկապէս Գերմանիոյ, Պէլճիքայի եւ Հոլանտայի մէջ կարեւոր ներկայութիւն եղող Բիւրտերուն ու յատկապէս PPK-ին դէմ «ձեռնոց նետելու» քաղաքականութիւն մը, որուն միջոցաւ Անգարա կու գար իր բողոքը արտայայտելու այդ Եւրոպական մայրաքաղաքներու ղեկավարներուն քիւրտերուն հանդէպ ունեցած «բարեացակամ» մօտեցումներուն դէմ: Այս բոլոր սուտեւնթէն բացի յստակ կը դառնար, որ Եւրոպայի տարածքին ապրող թուրքերուն մեծագոյն տոկոսին համար Էրտողան անփոխարինելի «Աթա» մըն էր, որ իր

մօտեցումներով, իսլամական իստապահանջութեամբ եւ օսմանեան արմատներու վրայ յենելով կը համարուի «անփոխարինելի» լիտըր մը:

**Սեւ եւ մոխրագոյն**  
Անկախ բարեփոխումներու արդիւնքէն ու պահ մը մէկդի դնելով Թուրքիոյ «նոր սուլթան»ին դիմագրաւած ներքին խնդիրները, պէտք է շեշտադրել, որ Էրտողան կանգնած է կարեւոր եւ ջրբաժան համարուող նրբանցքի մը առջեւ: Մինչեւ Թուրքիա իշխանութեան հասնիլը, Անգարա կ'ապրէր «բաւական լարուած» պահեր ու անոր ՆԱԹՕ-ի հետ ունեցած աւելի քան չիտուն տարուան «սիրաբանութիւն»ը պահուան մը համար կը խափանուէր, ոչ թէ անոր համար, որ ԱՄՆ նախագահը բաւարար միջամտութիւն չէր ունենար մասնաւորապէս Մուրիոյ պատերազմին աւելցնել, այլ անոր համար, որ ԱՄՆ նախկին նախագահը կարիք չէր գգար Անգարայի «Միջին Արեւելքի ոստիկան»ի նախկին դերակատարութեան: Այս առումով ալ Էրտողան յարմար կը նկատէր «ցատկել» դէպի Մոսկուա եւ միացեալ շահեր ունենալու ֆոնին վրայ, սկիզբ կ'առնէր Փութին-Էրտողան յարաբերութիւններու նոր փուլ մը, որ ցայսօր ալ կը շարունակուի: Այս բոլորէն դատ ու յատկապէս Մուրիոյ Հոմա քաղաքի «Աշիրաթ» գինուորական օդակայանին վրայ եղած ամերիկեան

Շար.ը էջ 19

## JENNY'S IMMIGRATION & SOCIAL SERVICES

Հաստատութեան տնօրէն եւ հայ համայնքին տարիներ շարունակ օգնութիւն ցուցաբերած փորձառու ճենի Աբրահամեանը շարունակուած է օգտակար լինել մեր հայրենակիցներին կառավարութեան կողմից գաղթականութեան փաստաթղթերի, հիւանդութեան, թոշակների եւ պետական օգնութեան ձեւակերպման անհրաժեշտ ծառայութիւններով:

### Քաղաքացիութեան Կեդրոն

1436 W. Glenoaks Blvd., Glendale, CA 91201  
Tel: (818) 242-8196 Fax: (818) 937-9120

**Քուր**  
ճանապարհներով  
Green Card եւ այլ  
գաղթականական  
ծառայութիւններ  
-Եթէ երբեւէ  
ունեցել էք  
խնդիրներ, որը  
կարող է ձեզ  
խանգարել  
քաղաքացիութեան  
հարցով, մի  
մտահոգուէք, մենք  
ձեզ կ'օգնենք ...

**Jenny Abrahamian**  
Թարգմանութիւններ՝  
Հայերէն, Անգլերէն, Արաբերէն,  
Ռուսերէն, Պարսկերէն եւ այլն  
-Լիազօրագրեր/ Appostille

Passport and Immigration Photos

### Նոտար/Notary

Վստահեցէք մեր տարիներու փորձառութեան եւ արդար աշխատանքին

Ձեր գաղթականական եւ այլ հարցերու շուրջ ամէն հարցումի պատասխանը մեր մօտ կը գտնուի (Section 8, խնամակալ, եւ այլն)

LIVE SCANS  
Fingerprinting

### ՊԱՅԱԶԱՏԻՐՈՒԹԻՒՆԸ՝ ՄՆԱՅՈՒՆ, ԶԱՐԱՏԵՒ ԱՐԺԵՔ

#### ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

Եւ այսպէս. անցան Մեծ Եղեռնին նուիրուած հանդիսութիւնները, ծաղկամատոյցներ, գրական-երաժշտական երեկոներ, եւ այլն, եւ այլն: Նորէն քաղցինք Ուրիշի պողոտայէն մինչեւ Թրքական հիւպատոսութիւն: Պոռագինք, կանչեցինք՝ տարբեր բովանդակութեան պատաստներու շուքին տակ: Խոռունքամ բազմութիւնը մէկ շունչ, մէկ մարմին դարձած՝ պատուոյ խնդիր ունի, արժանապատուութեան խնդիր, ոտնահարուած իրաւունքներու վերականգման խնդիր: Հոս արդէն հայու տեղայնութեան խնդիր չկայ, բոլորն ալ հայ են՝ ըլլայ լիբանանցի, հայաստանցի, եգիպտահայ, պարսկահայ՝ հայ, միայն ՀԱՅ: Մէկ նպատակ, մէկ պահանջատիրութիւն:

Հիմնականին մէջ, Եղեռնէն ճողողած հայերու մնացորդաց, օտար հողերու վրայ կերպով մը բոյն շինած, հայրենիքի տեսլականով տառապած եւ անոր հովանիին տակ նոր բոյն, հայրենի օճախ ունենալու երազանքով ներշնչուած, ներգաղթած հայերու (աղբարիկներու) շնորհիւ հայաստանաբնակ հայերը գիտցան, հասկցան, թէ ի՞նչպէս է, որ այդքան մեծաթիւ հայեր յայտնուած են Միջին Արեւելիքի, Եւրոպայի, նոյնիսկ՝ հեռավոր Ամերիկայի մէջ:

Հասկցան՝ եւ սկսան քայլել՝ արդարութիւն փնտռելով, եւ անքանի տարի է կը քայլէ հայր արդարութեան ետեւէն: Սկիզբը՝ կորսուած հողերը պահանջեց հայր, առանց հասկնալու, որ հողը չեն տար, կ'առնեն, կ'առնեն ուժով, պաշարով, եւ կամ ալ՝ ապահինելով խոշոր տէրութիւններու խղճին եւ շահադիտական նկրտումներուն:

Եկաւ պահը եւ հայր հասկցաւ, որ ռճրագործ թուրքին նախ պիտի դնել ցեղասպանութեան փաստին առջեւ եւ յետոյ նոր միայն անցնիլ պահանջատիրութեան խնդիրին:

Առաջինի պարագային մենք որոշակի յաջողութիւններու հասանք: Աշխարհի գրեթէ 28 պետութիւն ճանչցաւ Հայոց ցեղասպանութիւնը: Երկրորդ պարագան, որ անմիջականօրէն կապ ունի առաջինին հետ՝ տեղափոխ մէջ է եւ առերեւոյթ դժուար լուծուելիք: - Ի՞նչ ընենք, նորէ՞ն քաղցինք, նորէ՞ն պոռանք, կանչենք: Լաւ, նորէն քաղցինք, թող այս սրբացած օրը՝ Ապրիլ 24-ը մնայուն ըլլայ մեր ողջ կեանքի ընթացքին: Թէեւ ամէնքս ալ գիտենք, որ տարուան ընթացքին մէկ օր քաղցով հարց չի լուծուելիք:

- Քիչ մը շատ չեղա՞ւ մեր քայլերն երկարութիւնը, ուրիշ նոր ուղիներ չփնտռե՞նք: Եթէ հաշուելու ըլլանք այսքան տարիներու ընթացքին աշխարհածաւալ մեր քայլերն երկարութիւնը, ամէնքս միասին երկարազուններու շուրջ գէթ պտոյտ մը գործած կըլլանք: Եւ չմոռնանք, որ մեր ամէն մէկ քայլարշաւին ի պատասխան, թուրքը եւ ազերին միասնական ուժերով օրէօր կ'աւելցնեն Հայոց պետականութիւնն ու ժողովուրդին բնաջնջելու մամլիչ մեքենային արագութիւնը: Եւ այսքան տարիներէ ետք, մենք կարելոյն միջոցներով պիտի ջանանք գէթ դանդաղեցնելու այդ արագուշակ մեքենային արագութիւնը, լաւագոյն պարագային ալ՝ կեցնելու անոր ընթացքը:

Սա անամօթ, լկտի էրտողանին նայեցէք: Այնքան առաջ գացած է իր անասնական կիրքին յագուրդ տալու մոլոցքին մէջ որ, ոչ միայն իր իւրայիններուն, այլեւ ողջ աշխարհի մահմեդականներուն կը յորդորէ քէֆեր, խրախճանքներ ընել Գերմանիոյ եւ մնացեալ եւրոպական երկիրներու մէջ:

- Կերէք, խմեցէք եւրոպային մէջ, ջանացէք կոտորել-թափել ամէն ինչ՝ ինչ որ քրիստոնէական աշխարհին կը պատկանի, միեւնոյնն է, վաղը միւս օր աշխարհը մահմեդական պիտի դառնայ, եւրոպան մերը պիտի ըլլայ, - այս կոչն է, որ կը հնչեցնէ արնածարաւ Թուրքիոյ նախագահը: Եւ, զարմանալիօրէն աշխարհ գրեթէ լուռ կը մնայ այս ձաբուտութիւնը դիմաց, հաւանաբար մտովի յիշելով ուսուցանատուութիւնը, որ է՝ «Հիմարին մի առարկէր»:

Առարկութիւն չընենք՝ իմար է ըսողը, հասկցանք, բաց անկարելի է մտավախութիւն չունենալ, թէ այդ ապուշը կրնայ խենթ պահու մը անպիտի աննկարագրելի իմարութիւններ գործել, որոնց արդիւնքէն հազարներու, նոյնիսկ միլիոններու մահուան փաստին առջեւ կրնանք կենալ: Յիշեցէք թէ ինչի վերածեց օրեր առաջ էրդոզանի ձաբուտութիւնը ոգեւորուած խուժանը Բրիտանիոյ մայրաքաղաք Լոնտոնի բարեկարգ փողոցներն ու պուրակները, երբ երկրին իշխանութիւնները փորձեցին օրէնք հանել անօրէն գաղթականներուն երկրէն վտարելու վերաբերեալ:

Եւ այս աշխարհակալու երեւոյթներու կողքին եկողը եւ պահանջատիրութեան նոր ուղիներ փնտռէ: Սակայն մենք հայ ենք, տանջուած, չարչարուած, ոտնահարուած՝ նոյնիսկ իւրայիններու կողմէ, բայց ունինք բարձր, վսեմ արժանապատուութիւն եւ ոչինչ պիտի խանգարէ մեզի մշտապէս եւ մշտանորոգ միջոցներով հետապնդելու մեր արդար դատը:

Հայաստանի պատկան մարմիններուն եւ ժողովուրդին դաս տալու հաւակնութիւնը չունինք

բնաւ սոյն գրութեամբ, քաւ լիցի, միայն լուրջ մտահոգութեան եւ մտածումներէ առաջ եկած է այս յօդուածը:

Թուրքիենք ուրեմն այն միջոցներն ու հնարաւորութիւնները, որոնց շնորհիւ աւելի կամ նուազ չափով մօտեցած կրնանք ըլլալ վերջնական նպատակին: Խնդրեմ սոյն յօդուածը ընդունիլ որպէս անձնական կարծիք:

ԱՌԱՋԻՆ. Եթէ կ'ուզենք մեր հայրենի ժողովուրդին լաւագոյնս ներգրաւել պահանջատիրութեան համար մղուող պայքարին մէջ՝ անոր ապրուստը, օրուան հացը ապահովելն է: Ամէն տեսակ դժբախտութիւն, դաւաճանութիւն, անհանդուրժողականութիւն մարդուս քով կ'առաջանայ հացի պակասէն: Եւ եկուր այսօր հացի կարօտ մեր հայրենի ժողովուրդին դաս կարդայ պահանջատիրութեան մասին: Զըլլար, չի կրնար ըլլալ մեր ուզածին պէս: Ըսել է թէ՛ պահանջատիրութեան պայքարին առիւծի բաժինը, թող ներուշի, դարձեալ ինկած է սփիւռքահայութեան ուսերուն:

Վստահ եղէք, որ հայրենի ուսուցչուհիներու (Տնօրէններու գլխաւորութեամբ) մեղմ ըսուած, ծախուելիլ իշխանական թեւին՝ միայն օրուան հացը, աշխատանքը կորսնցնելու վախէն առաջ եկաւ: Ըսել է թէ որքան կարեւոր է հացը: Ես, որ սով տեսած եմ, գիտեմ թէ ինչ ըսել է հացի չգոյութիւնը: Խեղճ Արթուրը հացի գոհ չզարձա՞ւ: Ի միջի այլոց, ըսեմ որ, յետապու Արթուրին ոչ թէ պիտի կոչել Հաց բերող, այլ ինքնին՝ ՀԱՅ ԱՐԹՈՒՐ, որովհետեւ ան հաստատեց հացին սուրբ ըլլալը եւ գոհ գնաց հանուն հացի: Հոս, մենք սփիւռքահայերս, որ քիչ մը հացի տէր ենք, պարտաւոր ենք աւելի մօտէն հետեւիլ Հայրենիքի եւ Ղարաբաղի մէջ անցած-դարձացին: Գիտեմ, որ ամէնքն ալ կ'օգնեն Հայաստանի իրենց բարեկամներուն եւ՝ նոյնիսկ անձանթ մարդոց: Սակայն այս օրերուն աւելի-աւելի պիտի օգնել անոնց, որպէսզի քանի մը փարայի սիրոյն գաղթականութեան գոհ չզառնան եւ գործեն միայն ու միայն խղճի մտքը:

Ինչպէս կեանքը ցոյց տուաւ, անգամ մը եւս հացի սիրոյն հայրենի մեր ժողովուրդը ընարու-

թիւն չըրաւ խղճի մտքը եւ մնաց նոյն անհեռանկար վիճակին մէջ: Այդ նոյն օրերուն ազերի Ալիեւը տօնախմբութեան վերածեց Ապրիլ 2-ը՝ որպէս Ղարաբաղի դէմ տարած յաղթանակի օր:

Ես դեռ անցեալ տարի գրեցի, որ ապիլեան չորսօրեայ պատերազմը մեզի համար պարտութիւն էր, որովհետեւ հող կորսնցուցինք, հող, որը ձեռք բերած էինք հայու արիւնով: Եւ, չես գիտեր, թէ ինչ տրամաբանութեամբ էին որոշած հայրենի իշխանութիւնները յատկապէս այդ օրը շինծու խորհրդարանական ընտրութիւններ իրագործել, փոխարէն այդ օրը նշելու որպէս յիշատակի օր այն հարիւր, գուցէ թէ աւելի անբեղ, անմօրուք, անփորձ հայ գիւնտերներու հոգուցն համար, որոնք գօհ գացին անիմաստ չորսօրեայ պատերազմի ընթացքին: Մեղմ ըսած՝ բարոյական չէ այդ օրը շինծու տօնական տրամադրութիւն ստեղծելը:

ԵՐԿՐՈՐԳ գործօնը պահանջատիրութեան պայքարին մէջ հիմնական մասը վերապահուած է Սփիւռքին: Եւ այդ գործօնը ալ աւելի շարժուն դաճելու համար, տարիներ շարունակ շեփորուած ցեղասպանութեանը նուիրուած ֆիլմեր պատրաստելու գործը տեղէն շարժեցաւ: Կան այլեւս այդ թեմային հետ առնչուող նուազ կամ աւելի արժէքաւոր ֆիլմեր եւ գրականութիւն: Ահա խնդրեմ, ամսոյս 21-էն սկսեալ Միացեալ Նահանգներու ողջ տարածքին սկսաւ ցուցադրուիլ համբաւաւոր միլիարատէր Գըրգ Գըրգերեանի 100 միլիոն տոլարով պատրաստուած «Խոստում» ֆիլմը, որը անպայմանօրէն պիտի նայի իւրաքանչիւր մարդ աշխարհի բոլոր ծագերուն, գաղափար ունենալու համար թէ ինչ ըսել է Հայ ժողովուրդի ցեղասպանութիւն:

Սակայն հիմա կարգը եկած է Ամերիկայէն գատ, ուրիշ համայնքներու մէջ աշխուժացնելու պահանջատիրութեան դործօնը: Եւրոպայի հայ համայնքներուն մէջ օրէօր ալ աւելի կ'աւելնան Հայաստանէն արտագաղթողներու թիւը, որոնք արդէն լաւագոյնս գիտեն Հայոց Եղեռնի պատմութիւնը, եւ

Կազմակերպութեամբ՝  
Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ  
Մահակեան Սանուց Միութեան

### ՅԻՇԱՏԱԿԻ ԵՐԵԿՈՅ

Նուիրուած Բանաստեղծ, Մանկավարժ,  
Մշակութային եւ Հանրային Գործիչ՝

## ՊԵՊՕ ՄԻՄՈՆԵԱՆԻ

Ծննդեան 80-ամեակին եւ բեղուն վաստակին


Կը զեկուցեն՝  
Տք. Արշակ Գագանճեան  
«Մտատրականը եւ Մշակութային Գործիչը»

Գաբրիել Մուրջեան  
«Մարդը եւ Հանրային Գործիչը»

---

Տեղի կ'ունենայ  
Հինգշ. Մայիս 4, 2017-ին  
Երեկոյեան ժամը 8-ին

ՀԿԲՄ-ի Կարօ Սողանալեան սրահին ներս  
1060 N. Allen Ave. Pasadena, CA 91104



# ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՒՌ ԿԱԲԱՏՔՈՎ ԻՋՕՐԱՑՈՒՄ ՏԱՐԲԵՐ ԱՍՊԱՐԷԶՆԵՐՈՒՄ

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ապրիլն է եկել, ցեղասպանութեան տարեկիցն է: Հարիւր ու երկու տարիներ են անցնում, տակաւին մեր դատը մնում է չլուծուած, ո՛ւմ ենք սպասում, որ դաջ մեր դատը լուծի, թուրքիային պարտադրի, որ առերեսուի իր պատմութեան հետ: Երկար տարիների մեր քաղաքական կազմակերպութիւնների եւ գործիչների աշխատանքն ու գործունէութիւնը եղել է դիմելով երկրների կառավարութիւններին ճանաչելու եւ դատապարտելու հայոց նկատմամբ կատարուած ցեղասպանութիւնը, յաջողութիւնները ակնյայտ են, այն առումով որ աշխարհն ու միջազգային հանրութիւնը տեղեկացուել է այդ մասին, հայ ժողովրդի սահմակեցուցիչ սպանութիւնների, տառապանքների, տանջանքների, մարդկային, հողային եւ նիւթական կորուստների մասին, յարգանք եւ երախտագիտութիւն այն շուրջ երեսուն երկրների պետութիւններին եւ ժողովուրդներին, գիտնականներին, պատմաբաններին, քաղաքական եւ դիւանագիտական գործիչներին, որոնք ընդառաջելով ճանաչել եւ դատապարտել են համիդեան, երիտթուրքերի եւ քեմալականների կողմից կազմակերպուած ու ծրագրուած էթնիկ հայ ժողովրդի նկատմամբ կոտորածները եւ բնաջնջումը:

Կատարուած աշխատանքները մեզ այսօրուայ հանգրուանին են հասցրել, դեռ անելիքներ շատ կան առաւել կազմակերպուած շարունակելու մեր հարցի կապակցութեամբ ներգրաւելու նոր քրիստոնէայ եւ այլ երկրներ: Դիւանագիտական ճարտիկ իմացութեան շնորհիւ հարցը շարունակել մտցնելու համար Միացեալ Ազգերի կազմակերպութիւն, գիտենք ինչիւրը գերմեծերից եւ ժամանակի քաղաքական մակարդակից է կախուած, սակայն յոյսը, փորձը եւ աշխատանքը մեզ աւելի են կազմակերպելու եւ մեր նպատակներին մօտեցնելու: Հետեւողական եւ յամառ աշխատանքները յաջողութեան դռներ կը բացեն մեր առջեւ: Թշնամին ձեռնածալ չի նստելու, ասում են՝ գո՛ղ, սիրտը դող, չպէտք է միամիտ լինել, պէտք է զգոյշ լինել նրանց ներթափանցումից եւ պառակտիչ ծածուկ աշխատանքներից:

Սակայն այս ամենը չէ, մեծ անելիք ունի մեր հայրենի պետութիւնը երկիրը հզորացնելու տարբեր ասպարէզներում, արտագաթը կանգ տալու, ժողովրդի մտքում եւ հոգում ամրապնդելու յոյս ու հաւատ հայրենիքի եւ պետութեան նկատմամբ ու նախանձախնդրութիւն ազգային արժէքների պաշտպանութեան ի ինչիւր: Յիշենք մտաւորական Ա. Ալէքսանանի բանաձեւումը երկիր հզորութեան մասին՝ «Երկիրն ուժեղ է ո՛չ ի հաշիւ բնական պաշարների ու աշխարհագրական դիրքի, այլ՝ հոգեմտաւոր պաշարների ողջախոհ արդիւնահանման: Ընդամին՝ Ես-ի ու Մենք-ի միջեւ առկայ ակնյայտ խզումը ինքնին արգասիք է իրականութեան մէջ գոյող հնարաւորութիւնների անշրջահայեցաց մասման»:

Ուրեմն այսպէս հզորութեան ճամբին Սփիւռք-Հայաստան կապերը աւելի սերտացնել, որը առաւել օգտակար է լինելու հայրենիքի

զարգացման, նաեւ սերունդների հայապահպանման գործում: Սփիւռքի կուռ կազմակերպչութիւնը անհրաժեշտութիւն է յօգուտ հայ ժողովրդի միասնական ոգու պահպանման եւ հայրենիքի զարգացման: Հայրենի պետութիւնը պիտի ջանայ, որ արդարադատութիւնը, նուիրուածութիւնը եւ ծառայութիւնը հայրենիքին, ազգութեան եւ ժողովրդին առօրեայ կեանքի նշանաբանը դարձնել: Արցախի հարցով հայ քաղաքական միտքն ու Արցախի բնակչութիւնը պիտի որոշեն ու գործադրեն: Իմ կարծիքով՝ քաղաքականութիւնը հէր ու մէր չի ճանաչում, սակայն ծուռը նստենք եւ շիտակ խօսենք՝ այլքան գոհերից ու տառապանքներից յետոյ անարդ թշնամուկ պիտի բան գիջե՞լ, դեռ տարածքներ կան թշնամուկ կողմից բռնագրաւուած: Արցախի ինչիւրը մնում է մեր մեծամեծներին եւ քաղաքագետներին, իրենք է որ պիտի հարցը ծանր ու թեթեւ անելով - ժողովրդի կամքի համաձայն կազմակերպեն եւ լուծեն: Ոչ ոք դէմ չի հարեւանների հետ հաշտ եւ փոխադարձ շահերի վրայ յարաբերութիւններ եւ կապեր ունենալ, թող թուրք պետութիւնները լաւ իմանան, որ հայ ժողովուրդը իրենց թշնամին չի եղել, իրենք են եղել մեզ կոտորողները եւ մեր հայրենեաց տարածքները բռնագրաւողները, թող գիտակցութեան գան եւ իրենց շահին է Արցախի եւ ցեղասպանութեան հարցով հայ ժողովրդի արդար իրաւունքները եւ պահանջները իրականացնեն, սակայն թուրք պետութեանց քաղաքականութիւնից պարզ երևում է, որ նրանք յետին նպատակներ են հետապնդում հակառակ մեր ժողովրդի բարի դրացիութեան կամքի դրսեւորման:

Ինչպէս իմանում ենք՝ ոճրագործութիւնը եւ արիւնահեղութիւնը անժամանցելի են եւ ոճրագործը ուշ թէ շուտ պիտի պատժուի եւ հատուցում կատարի, ինչպէս թուրքիան որպէս հայ ժողովրդի ցեղասպան չի պատժուում միջազգային ատեանների կողմից գոյ առկայ վիթխարի փաստերի հիման վրայ եւ միջազգային շուրջ երեսուն պետութիւնների կողմից հաստատուած, նաեւ ներկայ Փրանցիսկոս Պապի կողմից նոյնպէս ընդունուած: Փաստը մնում է փաստ, նաեւ հազարաւոր հատորներ տարբեր միջազգային լեզուներով եւ միլիոնաւոր տպագրութիւններով տարածուած աշխարհի չորս կողմերում՝ հաղորդումներ, կինոժապաւէններ, յուշակոթողներ եւ այլն... Ինչո՞ւ անուշադրութիւն ՄԱԿ-կողմից, ինչո՞ւ անտարբերութիւն գերպետութիւնների կողմից, չէ որ անմեղ ժողովուրդ է կոտորուել եւ փաստացի, անփաստելի ու անբեկանելի դատ է ներկայացուել թուրքիայի ծրագրուած ու գործադրուած ցեղասպանութեան համար: Էթնիկ գտումների նպատակներով մի ամբողջ ժողովուրդ անագոյն միջոցներով նախճիրի վերածուել:

Այստեղ պատշաճ համարեցինք չիշել բանաստեղծ Դաւիթ Յովհաննէսի սրտամորմոք բանաստեղծութիւնը՝

«Ես ինչպե՞ս կուլ տամ եղեռնի ամօթը,  
Որին ուզում ենք աշխարհն էլ սատարի,

# ՆՈՐ ԿԻՐԱԿԻ - ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ 102-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ ԱՊՐԻԼ 23, 2017

«Նորոգեցարուք Յարութեամբն Քրիստոսի Նոր ժողովուրդ»: Շարակաճ

ԴՈԿՏ. Տ. ԶԱԻԷՆ ԱՐ. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Նոր Կիրակին Կրկնագատիկ է, Ս. Յարութեան տօնին յաջորդող Կիրակին, երբ շարականագիրը յատուկ կանոնով կ'երգէ օրուան շարականը՝ «Նորոգուինք Քրիստոսի Յարութեամբ եւ նոր ժողովուրդ դառնանք»: Երբ նոյն օրը կը դիմենք մեր նորօրեայ Սուրբ Նահատակներու միջնորդութեան, որքան ճշմարիտ կը գտնենք նոյն տողերը, հաստատ կերպով իմանալով որ հայ ժողովուրդին ուղղուած են որպէս յաւերժական հրաւէր: Հայոց դէմ գործադրուած Յեղասպանութեան գոհ եւ պատարագ եղող միլիոն եւ կէս հայորդիներու սրբագործումը կատարուեցաւ ճիշդ նոյն օր, երկու տարի առաջ, Ապրիլ 23-ին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մէջ: Յիրաւի անցնող հարիւրմեակի ընթացքին խլեակներու վերածուած, որբերու եւ տնանկներու կարաւանները հետզհետէ յարութիւն առին՝ Քրիստոսի Յարութեան աւետիսով, ու դարձան նոր ժողովուրդ:

Տասնամեակները իրենց կարգին կեանքի վերածեցին ինչ որ մահաբեր եւ ամպամած խորշակները խեղդած էին սփիւռքի տարածքին որբացած հայ ժողովուրդը: Ինչ հրաշք, երբ հերոսական պատմու-

թիւնը հայոց, վկայուեցաւ քսանական թուականներուն Արմաշական մնացորդաց հոգեկրօն կրօնաւորներու շնորհիւ, որոնք վերականգնեցին Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնն ու Անթիլիասի Կիլիկեան Աթոռը, եւ 1926 թուին հիմնեցին Մելգոնեան Կրթական Հաստատութիւնը Գրիգոր ու Կարապետ Մելգոնեան բարարներու եւ ՀԲԸՄիութեան անմիջական օժանդակութեամբ, նախ որպէս որբանոց, եւ շուտով որպէս բարձրագոյն բացառիկ կրթարան սփիւռքի տարածքին:

Սահակ Բ Խապայեան Կիլիկիոյ Հայրապետը, Եղիշէ Դուրեան Պատրիարքը, Զաւէն Տ Եղիայեան Պատրիարքը, Բաբգէն Կիլիկեան Աթոռակից Կաթողիկոսն ու թորգոմ Գուշակեան եւ Մեսրոպ Նարոյեան Պատրիարքները, որոնք դարձան մերօրեայ դիւցազուն կրօնապետները, հալածուած Արմաշէն եւ Սիսէն, եկան ստեղծելու Սփիւռքի կրօնական եւ կրթական հաստատութիւնները: Որքան ճշմարիտ են սրբազան շարականագիրի խօսքերը, թէ անոնք նորոգուեցան Յարութեան աւետիսով ու հաւատքով եւ նորոգեցին հայութեան կեանքը անմիջական անցեալի մահաբեր խոր-

Շար.ը էջ 17

Saturday, May 20, 2017

# ARMENIAN FOOD FAIR & FEST 2017

presented by the  
**Armenian Apostolic Holy Cross Cathedral**  
**2 pm – 10:00 pm**  
 Beer Garden Open Until Midnight  
 900 W Lincoln Ave ▪ Montebello  
 Admission: Adults \$2.00 Kids (12 & under) Free

Find us on Facebook #AFFF2017

For Info Call (323) 727-1113

[armenianfoodfair.com](http://armenianfoodfair.com)

Grand Sponsor: **ARF DRO GOMIDEH**

Շար.ը էջ 16

# ԿԱՐԵԼԻ ԶԷ ԿԵԱՆՔԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ ԹԱՔՑՆԵԼ

ԴՈՎՏ. ԶՐԱՅՐ ԸԵՊԵՏԱՆ

22 Մարտ 2017. Ուլիթընպերկ՝ այսպէս ըսած նախկին արեւելեան Գերմանիոյ գեղեցիկ քաղաքներէն մէկը: Հոն, ուր Մարթին Լուտեր ապրեցաւ եւ ստեղծագործեց, հիմը դնելով նաեւ եկեղեցւոյ ու ընդհանրական կեանքի բարեկարգումի գործընթացին: Այս տարի կը գուգադիպի այս բարեկարգումի շարժումին հինգ հարիւր ամեակին: Գերմանիան եւ շարք մը այլ երկիրներ մեծ հանդիսութիւններով պիտի յիշատակեն այս տարեդարձը: Գերմանիան այս իմաստով ծրագրած է ձեռնարկներու շարք մը՝ ոգեկոչելու համար այս իրադարձութիւնը:

Թիւնը ու անոր մթնոլորտը Գերմանիոյ հաւաքական կեանքին մէջ տիրական դարձած են միջին դարերէն սկսեալ, եւ ըստ երեւոյթին բարեկարգումի շարժումն ալ որեւէ ձեռով չէ կրցած «բարեկարգել» այս մթնոլորտը: Իսկ պատմութեան տուեալները աւելիով կ'ապացուցեն, թէ բարեկարգման շարժումը նաեւ «հրահրած» է այս զգացումները, համեմատելով մինչեւ քսաներորդ դարու ողջակիզումին:



Նոյն եկեղեցւոյ կից գտնուող յուշակոթող մը գրաւեց ուշադրութիւնս: Երբ գերմանական պետութիւնը ընդունած է իր գործած քստմենելի ոճիւրները՝ առաջարկուած է անոր եկեղեցիի ճակատէն վերցնել այդ նկարը: Տեղւոյն հրեայ հաւաքականութիւնը մերժած է այդ առաջարկը եւ որոշած է այդ նոյն նկարին կողքին գետեղել այլ յուշարձան մը՝ նոյն եկեղեցիին կից, բայց գետինը: Այս պարագային գետինը ունի խորհրդանշական իր պատգամը: Կոթողը կը ներկայացնէր խորհրդանշական ձեռով՝ կիսով բացուած գետինը՝ եւ կարծես գերբնական ուժով մը կը փորձէր դուրս ժայթքեցնել ճշմարտութիւնը: Կոթողին միտք բանիին մէջ չեն մոռցած յիշատակելու թէ՛ «կարելի չէ կեանքի ճշմարտութիւնը թաքցնել»:

Մարդկային կեանքին ու անոր պատմութեան մէջ գործադրուած քստմենելի մէկ ոճիւրն ու ողջակիզումի իրականութիւնն էր, որուն դէմ յանդիման կանգնած էի: Կանգնած էի յուզումով եւ յուսախաբուեթեամբ: Հարց կու տայի, թէ ինչպէ՞ս մարդկային միտքն ու բանականութիւնը կրնան այսքան ոճիւր հանդուրժել: Այս երկու կոթողներուն մօտ՝ նաեւ ցանցած էին Մայրի ծառ մը: Անգալաբար անցայ Մայրի ծառին տակը, որովհետեւ զգացի հարազատ. վերջապէս իմս էր՝ լիբանանեանը: Ուլիթընպերկի մէջ Մայրի ծառը իր կարգին ունէր խորհրդանշական այլ պատգամ: Կեանքին պատգամն էր այդ. անիկա կեանքին

Քաղաքին տարբեր շրջանները ու տակաւին պատմական հիմք ունեցող ամէն կոթող ու թանգարան այցելելով կարելի էր տեսնել բարեկարգումի շարժումին բերած հոգեւոր մեծ նպաստը՝ եկեղեցական, կրթական ու ընկերային շատ մը ոլորտներու մէջ: Բարեկարգումի շարժումը սկսաւ գլխաւորաբար Աստուածաշունչի թարգմանութեամբ եւ զայն ժողովուրդին տրամադրելի դարձնելու միտումով: Ան նաեւ կրթական-ակադեմիական մեծ վերելք մը ստեղծեց՝ վերածուելով ներշնչումի եւ մարդկային, ընկերային ու հաւաքական կեանքերուն տուաւ մեծ սլացք: Այս սլացքն էր, որ շատ յստակ կերպով սկսայ տեսնել երբ կը շրջագայէի պատմական այս քաղաքին մէջ:




Բայց այս քաղաքին ու բարեկարգումի «լուսաւոր» կեանքին մէջ կար «տխուր» եւ «խաւար» երես մը: Ուլիթընպերկ քաղաքին կեդրոնական եկեղեցիներէն մէկուն պատին վրայ գետեղուած էր միջին դարերէն մնացած «խոզի» նկար մը ու հրեայ պատիկներ, որոնք նոյն խոզին կաթէն կը խմէին: Նկարը տեսնողը կը հասկնար, թէ պատիկները դասուած էին համահաւասար սերունդ եւ պատկանելիութիւն՝ նոյնինքն խոզին:

Հակասեմական տրամադրութիւնները, բայց նաեւ ատելու-



շարունակականութեան հաւատալու եւ անոր վերապրելու իրականութեան ամուր կառչելու գրաւականն էր: Իբրեւ լիբանանահայ ապրած էի կեանքին ու անոր շարունակականութեան նկատմամբ հաւատքը, որովհետեւ Լիբանանի երկար տարիներու պատերազմին արհաւիրքն ու անոր դժուար փորձարկութիւնները առկայ էին, ինչպէս որ այդ դժուար փորձարկութեան մէջ վերապրելու հրամայականը ինքզինք կը փաստէր:

Ճիշդ է, որ Մայրի ծառին տակ հանգիստ զգացի եւ ապահով՝ բայց անպայմանորէն սկսայ ապրիլ իմ՝ հայուն ցաւը: Հայոց



**ST. GREGORY THE ILLUMINATOR  
ARMENIAN APOSTOLIC CHURCH**  
2215 E. Colorado Boulevard, Pasadena, California 91107  
Tel: (626) 449-1523 Fax: (626) 449-7039  
Email: stgregoryarmenianchurch@yahoo.com

---

### St. Gregory Armenian Orthodox Bookstore

Presents



The newly published 14th volume in the UCLA series, *Historic Armenian Cities and Provinces*

**Armenian Communities of the Northeastern Mediterranean**

**Musa Dagh-Dört-Yol-Kessab**

(with Antioch, Beylan, Ruj Valley, and villages near Latakia)

On Sunday May 7, 2017 @ 12:30 pm (Immediately after Badarak)  
2215 E. Colorado Blvd., Pasadena, CA 91107

**Presented by Dr. Richard G. Hovannisian**

Featured Speaker with Illustrated Presentation  
Light reception provided, Book purchase and signing available after program

This power-point presentation is based on the last three volumes of Professor Hovannisian's UCLA conference series "Historic Armenian Cities and Provinces." It focuses on lesser known but vibrant Armenian communities in Asia Minor, such as Ismid, Bardizag, Adabazar, Armash, and Bursa as far as Konia; the Cappadocian region of Gesaria/Kayseri, Talas, Evkere, Tomarza, and Evereg-Fenese; and the Northeastern Mediterranean coastal centers of Dort-Yol, the Sanjak of Alexandretta, Musa Dagh, and Kessab, an area where the rugged and sturdy people repeatedly demonstrated their heroism.

## ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿՈՒՌ ԶԱՒԱՏՔՈՎ

Շարունակուած էջ 15-էն

Ես ինչպէ՞ս շնչեմ անմեղ արեւան հոտը,  
Որ չի մակարդուում այս էլ հարիւր տարի,  
Ինչպէ՞ս մոռանամ միլիոնների քոչը,  
Որը քշում էր արնախում խուժանը...  
-Երբ պիտի գայ արդար հատուցման ժամը,  
Բայց գործով՝ քանզի չի՝ ազդում էլ կոչը»:  
Մտածումներ ցեղասպանութեան հարիւր եւ երկու տարելիցի առիթով, որոնք շատ-շատ

հայրենասէր ու ազգասէր երախտաւոր մարդկանց կողմից ասուած ու գրուած են, զիտեմ կրկնողութիւն է, սակայն շարունակ կրկնողութիւնը մեր երկրին, ժողովրդին եւ ազգին կապուող հարցերով կարիք են, որպէսզի դառնայ բնագոյ դրոշմուկով մտքում անմոռաց:  
Ուրեմն՝ հարկ ենք համարում, որ բոլորս հայրենիքին ականջալուր անտեղիտալի միասնական ոգով ու խօսքով հետապնդենք մեր պահանջները եւ սատար կանգնենք հայրենիքի հզօրացման, միակ յաջողութիւնը մեր տառապած ժողովրդի:





### «Բարսելոնան» Յաղթանակ Կորգեց Եւ Դաւասարուեց «Ռեալին»



«Բարսելոնայում» Լիոնել Մեսսիի 500-րդ գոլը կատարողական ակումբին աւելացուած ժամանակում յաղթանակ պարգեւեց Մադրիդի «Ռեալին» դէմ արտագնայ խաղում: Ֆուտպոլի Սպանիայի առաջնութեան 33-րդ տուրում կայացաւ Սուպերկլասիկոն «Ռեալին» ու «Բարսելոնային» միջեւ: Մադրիդի «Սանտյագո Բերնաբեու» ստադիոնում կատարողականները կամային յաղթանակ տարան 3:2 հաշուով: Արքայական ակումբը կարմիր քարտ ստանալուց յետոյ վերջնամասում կարողացաւ հաւասարեցնել հաշիւը, սակայն աւելացուած ժամանակում Լիոնել Մեսսին խփեց հիւրերի յաղթական կոլը՝ դառնալով նաեւ դուբլի հեղինակ: Ընդ որում՝ դա բոլոր մրցաշարերում արժեքներնացի յարձակուողի 500-րդ կոլն էր «Բարսելոնային» կազմում:

Այս յաղթանակից յետոյ «Բարսելոնան» վաստակեց 75 միաւոր եւ հաւասարուեց «Ռեալին», որը մէկ հանդիպում պակաս է անցկացրել: Կատարողականներն Արքայական ակումբին գերազանցում են թէ՛ իրար միջեւ խաղերի, թէ՛ խփած եւ բաց թողած կոլերի ցուցանիշով: Պրիմերայի առաջին շրջանում թիմերը ոչ ոքի էին խաղացել Բարսելոնայում (1:1):

### Եւրոպայի լիգա. Զենրիխ Միխթարեանի Կոլը «Մանչեսթեր Եունայթեդին» Օգնեց Դուրս Գալ Կիսաեզրափակիչ

«Մանչեսթեր Եունայթեդը» նուաճեց Եւրոպայի լիգայի կիսաեզրափակիչի ուղեգիր: Քառորդ եզրափակիչի պատասխան խաղում անգլիական ակումբը տանը լրացուցիչ ժամանակում 2:1 հաշուով յաղթեց բելգիական «Անդերլեխտին»:



Ինչպէս Բելգիայում կայացած առաջին խաղում, այնպէս էլ այս հանդիպման հաշիւը բացեց Հայաստանի հաւաքականի կիսապաշտպան Հենրիխ Միխթարեանը, որն աչքի ընկաւ 10-րդ րոպէին՝ խփելով 5-րդ կոլը Եւրոպայի լիգայի այս մրցաշարում: Խաղի սկզբնամասում «Անդերլեխտին» աւելի լաւ տեսք ունէր եւ չլուսահատուեց նաեւ բաց թողած կոլից յետոյ: 2 կոլային պահ կորցնելուց յետոյ բելգիական ակումբը հաշիւը հաւասարեցրեց 32-րդ րոպէին: Առաջին խաղակէսի վերջնամասում «Մանչեսթեր Եունայթեդը» աւելի ակտիւ էր, սակայն թիմերն ընդմիջման գնացին 1:1 հաշուի ժամանակ:

Երկրորդ խաղակէսն անցնում էր հաւասար պայքարում, բայց առանց իրական կոլային պահերի:

Լրացուցիչ ժամանակում անգլիական ակումբն ունէր առաւելութիւն, որը կարողացաւ վերածել կոլի: 107-րդ րոպէին յաղթական կոլի հեղինակ դարձաւ Մարկուս Ռեշֆորդը: Հենրիխ Միխթարեանը հանդէս եկաւ առանց փոխարինման:

Կիսաեզրափակիչի ուղեգիր նուաճեցին նաեւ իսպանական «Սելտան» ու Ամստերդամի «Այաքսը» եւ ֆրանսիական «Լիոնը»:

### «Արսենալը» Յաղթեց «Մանչեսթեր Սիթին» Եւ Դուրս Եկաւ Եզրափակիչ

Լոնտոնի «Արսենալը» դարձաւ ֆուտպոլի Անգլիայի գաւաթի խաղարկութեան եզրափակիչի երկրորդ մասնակիցը եւ տիտղոսը կը վիճարկի «Չելսիին» հետ:

Լոնտոնի «Ուեմբլի» ստադիոնում կայացած կիսաեզրափակիչում Արսեն Վենգերի թիմը լրացուցիչ ժամանակում 2:1 հաշուով յաղթեց «Մանչեսթեր Սիթին»: Լոնտոնեան ակումբի յաղթական կոլը 101-րդ րոպէին խփեց չիլիացի յարձակուող Ալեքսիս Սանչեսը:

Յիշեցնենք, որ միւս կիսաեզրափակիչում «Չելսին» 4:2 հաշուով յաղթել էր «Տոտենհեմին»:

Անգլիայի Գաւաթի գործող յաղթողը «Մանչեսթեր Եունայթեդն» է: Եզրափակիչը տեղի կ'ունենայ Մայիսի 27-ին «Ուեմբլիում»:

### Արթուր Աբրահամից Յաղթանակի Դամար Պահանջուեց 12 Ռաունդ



Սուպերմիջին քաշային կարգում WBO վարկածով աշխարհի նախկին ախոյեան Արթուր Աբրահամը Գերմանիայի էրֆուրտ քաղաքում անցկացուած WBO-ի վարկանիշային մենամարտում մրցավարների որոշմամբ, միաւորներով պարտութեան մատնեց Լեհաստանը ներկայացնող, Միւնխենում բնակվող կոսովցի Ռոբին Կրասնիկիին:

37-ամեայ հայ բռնցքամարտիկին պահանջուեց անցկացնել բոլոր ռաունդները: 9-րդ ռաունդից Աբրահամը հսկայական առաւելութիւն ձեռք բերեց 29-ամեայ մրցակցի նկատմամբ եւ մենամարտը յաղթական աւարտի հասցրեց 12-րդ ռաունդում:

Արթուր Աբրահամն իրաւունք նուաճեց մասնակցել WBO-ի ախոյեանական մենամարտի մեքսիկացի Խիլբերտո Ռամիրեսի դէմ:

Յիշեցնենք, որ Արթուր Աբրահամը նախորդ տարուայ Նոյեմբերի 12-ին Մոնակոյում պէտք է ունենար մենամարտ անցկացնել բրիտանացի Մարտին Միլերի հետ, սակայն արմունկի վնասուածքի պատճառով հրաժարուել էր այդ մենամարտից: Աբրահամը նախորդ մենամարտն անցկացրել էր Յուլիսի 16-ին Բեռլինում՝ նոկաուտով 8-րդ ռաունդում յաղթելով նորվեգացի Թիմ Ռոբին Լիհաուզին:

### Լեւոն Արոնեանը Անպարտելի Էր Գերմանիայում

Հայաստանի ուժեղագոյն շախմատիստ Լեւոն Արոնեանը գերազանց հանդէս եկաւ Գերմանիայում կայացած «Գրենկէ Չեսս Կլասիկ» միջազգային մրցաշարում:

Վերջին 7-րդ տուրում Հայ շախմատիստը սեւերով մրցեց ամերիկացի Ֆաբիանո Կարուանայի հետ: Լեւոն Արոնեանը չնայած ժամանակից շուտ ճանաչուել էր մրցաշարի յաղթող, սակայն կրկին մարտական էր տրամադրուած եւ փորձեց հերթական միաւորը վաստակել:

Խաղի ընթացքում Արոնեանը դիրքային եւ նիւթական մեծ առաւելութիւն ստացաւ, սակայն մի պահ յապաղեց եւ մրցակցին թոյլ տուեց հակադրոհ կազմակերպել: Արդիւնքում, ՖԻԴԵ-ի դասակարգման աղիւսակի 2-րդ համարը փորձեց թագուհով պայքարել երկու նաւակների դէմ, բայց՝ ապարդիւն: Պարտիայի 61-րդ քայլում Լեւոն Արոնեանը մրցակցին ստիպեց խաղաղ դաշն կնքել:

Այդպիսով, մեր շախմատիստը վաստակեց 5,5 միաւորով եւ մեծ առաւելութեամբ զբաղեցրեց առաջին տեղը: Նրան յաջորդող Ֆիաբիանո Կարուանան ու աշխարհի ախոյեան Մագնուս Կառլսենը բաւարարուեցին 4-ական միաւորով:

Այս յաղթանակից յետոյ Լեւոն Արոնեանը 15,3 կէտով բարելաւեց իր վարկանիշային միաւորները եւ ՖԻԴԵ-ի աղիւսակում 9-րդ տեղից բարձրացաւ 6-րդ հորիզոնական:


### Արթուր Դալալոյեանը՝ Եւրոպայի Ախոյեան, Արթուր Դաւթեանը 5-րդն Է

Ռումինիայի Կլուժ քաղաքում աւարտին մօտեցող սպորտային մարմնամարզութեան Եւրոպայի առաջնութիւնում Արթուր Դաւթեանը 5-րդ տեղը գրաւեց հենացստի վարժութիւնում: Հայաստանի ներկայացուցիչը գրանցեց 14.583 միաւոր, իսկ Եւրոպայի ախոյեան դարձաւ Ռուսաստանը ներկայացնող Արթուր Դալալոյեանը՝ 14.933 միաւոր:

Արծաթէ մետալակիր դարձաւ ռումինացի Մարիան Դրազուլեսկուն (14,733), իսկ երրորդ տեղը գրաւեց ուկրաինացի Օլեգ Վերնյանը (14,649):

Հայաստանի թիմը Եւրոպայի առաջնութիւնն աւարտեց մէկ մետալով: Նախօրէին Յարութիւն Մերդինեանը երրորդ տեղն էր գրաւել նժոյգի վարժութիւնում: Օղակների վարժութեան եզրափակիչում Հայաստանն ունեցել էր երկու ներկայացուցիչ: Վահագն Դաւթեանը գրաւել էր չորրորդ (14,858), Արթուր Թովմասեանը՝ 7-րդ տեղը (14,666): Արթուր Դաւթեանն էլ 6-րդն էր բազմամարտում:





**Լուսանկարներ Լուս Անձելրսի Արդարութեան Քայլարշաւէն**  
By Arka Photo